

## Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՍԱՐՁՊԵՏԱՐԱՆԻ

### ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԲԱԺՆԻ-ՍԱՐՁԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի /այսուհետ՝ Մարզպետարան/ աշխատակազմի /այսուհետ՝ Աշխատակազմ/ հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչությունը /այսուհետ՝ Տեսչություն/ կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Տեսչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, քաղաքացիական ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Իրավական ակտերի մասին», Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, Հայաստանի Հանրապետության կառավարության և վարչապետի որոշումներով, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի /այսուհետ՝ Մարզպետ/ որոշումներով և կարգադրություններով, Աշխատակազմի ղեկավարի հրամաններով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Տեսչության լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերով:

3. Տեսչությունը կազմավորում, վերակազմակերպում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Տեսչության կանոնադրությունը հաստատում /փոփոխում/ է Մարզպետը:

## II. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Տեսչությունն իր լիազորությունների շրջանակներում՝

ա) վերահսկում է Արագածոտնի մարզի (այսուհետ՝ Մարզ) համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականության հողերը.

բ) վերահսկում է Մարզի սահմանանիշների և գեոդեզիական կետերի պահպանումը .

գ) կազմակերպում է Մարզի համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում պատվիրատուի գործառնությունները.

դ) կազմակերպում է Մարզի հողերի օգտագործման սխեմաները սահմանված կարգով կառավարության հաստատմանը ներկայացնելու աշխատանքները.

ե) կազմում է Մարզի հողային հաշվեկշիռը.

զ) վերահսկողություն է իրականացնում Մարզի տարածքում հողաշինարարության , հողօգտագործման և հողի պահպանման նկատմամբ, կանխում, կասեցնում և վերահսկում ապօրինի հողօգտագործումը.

է) վերահսկում է համայնքների ղեկավարների գործունեությունը հողային հարաբերությունների բնագավառում.

ը) վերահսկողություն է իրականացնում համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման գործընթացի նկատմամբ.

թ) համակարգում է համայնքային սեփականություն համարվող հողերի օգտագործման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացը.

ժ) կազմակերպում է համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարձակալության տրամադրված հողերի վարձավճարների գանձման և նոր պայմանագրերի պետական գրանցման աշխատանքները.

ժա) կազմակերպում է համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի նախագծերի իրականացման աշխատանքները.

ժբ) կազմակերպում է Մարզի տարածքում հանրապետական և տարածքային հողաշինարարական նախագծերի իրականացման աշխատանքները

ժգ) կազմակերպում է ընթացիկ ստուգումներ մարզպետի կողմից հաստատված ամենամյա ժամանակացույցին համապատասխան՝ ըստ համայնքների, համաձայնեցնելով իրավական հսկողության բարձրագույն մարմնի հետ.

ժդ) իրականացնում է վերահսկողություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերի բերրիության, հողի այլ օգտակար հատկությունների պահպանման, բարելավման և արդյունավետ օգտագործման գործընթացի նկատմամբ.

ժե) համակարգում է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման գործընթացը.

ժզ) համակարգում է մարզի տարածքում համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի օգտագործման տրամադրման մրցույթների կազմակերպման և անցկացման գործընթացը.

ժե) իրականացնում է վերահսկողություն մարզի տարածքում համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողամասերի նպատակային օգտագործման գործընթացի նկատմամբ

ժը) կազմակերպում է մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ կառավարություն առաջարկություններ ներկայացնելու աշխատանքները .

### **III. ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ**

7. Տեսչությունն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:

8. Տեսչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:

9. Տեսչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Բաժնի պետը:

10. Տեսչության պետը և աշխատողները համարված են քաղաքացիական ծառայողներ:

11. Տեսչության պետի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների, քաղաքացիական ծառայության դասային աստիճանի հետ կապված դրույթներն սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

